


ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ԸՆԲԱԹԱԹԵՐԹԻ

Սեպտեմբեր 2020



ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ՝ ՀԱՅ ԴԱՏԻ ԱՐԴԱՐԱՅԻ ԼՈՒԾՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Սեւրի դաշնագիրը՝ մեկ կողմէ դաշնակից ուժերու եւ միւս կողմէ Թուրքիոյ միջեւ կնքուած խաղաղութեան առաջին դաշնագիրն է, որ պաշտօնապէս ճանչցաւ Հայաստանը իբրեւ անկախ պետութիւն եւ Կարնոյ, Պիթլիսի ու Վանի նահանգները կցեց Հայաստանի Հանրապետութեան:

1920 Օգոստոս 10ին ստորագրուեցաւ Սեւրի դաշնագիրը, Սեւրի մէջ (Փարիզի մօտ), Թուրքիոյ կայսրութեան եւ համաշխարհային առաջին պատերազմին յաղթող դաշնակից պետութիւններու միջեւ՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, Ճափոն, Յունաստան, Լեհաստան, Ռումանիա, Հայաստան, Չեքոսլովակիա, Սերպիա, Խրուաթիա եւ Սլովենիա:

Հայաստանի Հանրապետութեան անունով պայմանագիրը ստորագրեց Ա. Ահարոնեան, իսկ արեւմտահայութեան որպէս ներկայացուցիչ՝ Ազգ. Պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպարը:

Սոյն դաշնագրին համաձայն Թուրքիային կը մտար Կ.Պոլիսը եւ շրջակայքը: Իսկ Հայաստանի իրաւունքները կ'ընդգրկէին 88-93 յօդուածները, ուր Թուրքիան Հայաստանը կը ճանչնար ազատ ու անկախ պետութիւն: Իսկ ինչ կը վերաբերէր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթլիսի նահանգներուն, այդ սահմանագտումը պիտի վստահուէր Ա.Մ.Նահանգներուն: Իսկ Ազրպէյճանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանագծումը կը կարօտէր այդ պետութիւններուն հետ ուղղակորէն բանակցութիւններ վարել, հակառակ պարագային, վստահիլ գլխաւոր դաշնակից պետութիւններուն՝ խնդիրը լուծելու յատուկ յանձնաժողովի օգնութեամբ:

Այսպիսով պայմանաւորուածութիւն մը ստեղծեցին, որ Վրաստանը, Հայաստանը, Ազրպէյճանը եւ Պարսկաստանը Պաթումի նաւահանգիստով ազատ մուտք ունենայ Սեւ Ծով: Դաշնակիցները բարեացակամօրէն կը վերաբերէին Կարսէն Ճորոխի հովիտով դէպի «Հայկական Միջանցք» գաղափարին, սակայն պայմանագիրը ստորագրուած պահուն Վրաստանը այդ մէկը փոխարինելով, հայերուն առաջարկեց երկաթուղի կառուցել Վրաստանի տարածքով, եւ որովհետեւ տակաւին յստակ չէր Տրապիզոնի նաւահանգիստի Հայաստանի սահմաններուն մէջ ընդգրկելը, յատուկ յօդուածով Հայաստանին կ'երաշխաւորէր թրանզիթային արտօնութիւններ ու նաւահանգիստի մէկ մասին առայւեւ վարձակալութիւնը:

Նախքան սահմանագծումն ու Սեւրի դաշնագրի ստորագրումը, նախագահ Ուիլիսոնի նշանակած յանձնաժողովը պարտաւոր էր ուսումնասիրել շրջանի տարբեր տեսակի հարցերը: Սոյն դաշնագրով Հայաստան պետք էր ստանար Վանի եւ Պիթլիսի նահանգներու երկու երրորդը, Էրզրումի գրեթէ ամբողջ նահանգը, Տրապիզոնի նահանգին մեծ մասը՝ ներառեալ նաւահանգիստը եւ միաւորուելով Անդրկովկասի մէջ արդէն գոյութիւն ունեցող Հայաստանի Հանրապետութեան հետ, հայկական անկախ պետութիւնը կ'ունենար շուրջ 160 հազար քառ.քմ. դէպի Սեւ Ծով ելքով:

Սեւրի դաշնագիրը կրնար նպաստել Հայկական Հարցի լուծման եւ հայ ժողովուրդին տրամադրել անոր ազգային համախմբման համար բաւարար տարածք, սակայն այդ բոլորը մնաց թուղթի վրայ, որովհետեւ քեմալականները դիմեցին այդ հաստատումը կանխող տարբեր միջոցներու եւ որպէս առաջին քայլ՝ նոր արշաւանք սկսան Հայաստանի Հանրապետութեան դէմ, ոչնչացնելու մտադրութեամբ, եւ շատ չանցած 1923ի Լոզանի պայմանագրով դաշնակիցները ճանչցան Մ. Քեմալի կառավարութիւնը, աւելին, անոնք ճանչցան Թուրքիոյ նոր սահմանները, որոնք կ'ընդգրկէին Արեւելեան Հայաստանի նախկին շրջանները՝ Կարսը, Արտահանը, Սուրմալուն: Դժբախտաբար, զանազան պատճառներով Սեւրի դաշնագիրը չվաւերացուեցաւ նոյնիսկ ստորագիրներու կողմէ, սակայն կը մնայ յուշագիր մը՝ Հայ Դատի արդարացի լուծման որպէս հիմնական մէկ հանգրուան, կերտելու Ազատ, Անկախ եւ Ամբողջական Հայաստանի մեր տեսլականը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՕՇԱԿԸ, ԶԻՆԱՆՇԱՆԸ ԵՒ ՔԱՅԼԵՐԳԸ

Հայաստանի ազգային դրոշակի գոյներն են հորիզոնական՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն:

Ազգային զինանշանի կեղծանունը կը գտնուի վահանաձև տարածություն մը՝ բաժնուած չորս մասի: Իւրաքանչիւր մասին մէջ գետեղուած են Հայաստանի չորս թագաւորութիւններէն՝ մէկուն զինանշանը՝ Արտաշէսեան, Արշակունեան, Բագրատունեան, Ռուբինեան: Մէջտեղը պատկերուած են մեծ ու փոքր Մասիսները: Վահանին աջ ու ձախ կողմերը բռնած են արծիւ մը և առիւծ մը, իսկ ներքևը կ'երևին սուր, գրիչ, հասկեր ու շղթայ:

Սուրը կը խորհրդանշէ ուժը:


Գրիչը կը խորհրդանշէ մտաւորականութիւնը:

Հասկերը կը խորհրդանշեն երկրին հարստութիւնը:

Շղթան կը խորհրդանշէ այն կղզանքը, որով կը պահպանենք երկրին սահմանները:

Անկախ Հայաստանի քայլերգը որոշուեցաւ Միքայէլ Նալպանտեանի «Մեր հայրենիքը», որ հետագային կարգ մը բառերու բարեփոխումով դարձաւ նաև 1991-ի հանրապետութեան քայլերգը:

Ո՛վ է Արամ Մանուկեանը



Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադիր: Վանի հերոսական ինքնապաշտպանութեան ղեկավար Արամ Մանուկեան, բուն անունով Սերգէյ Յովհաննէսեան, ծնած է 1879-ին Ղափանի Զէյվա գիւղը:

Ան անվախ կերպով շրջանի աղքատ դասակարգը կը պաշտպանէր աղաներու կողոպուտներէն:

1918 Մայիսին, երբ թրքական բանակի դիմաց հայկական զօրքերը կը նահանջեն, յուսահատութիւն կը տիրէ, առաջարկներ կ'ըլլան Երևանը պարպելու: Մակայն Արամի հրահանգը կտրուկ էր. *«Երևանը չենք պարպել, եթէ պէտք ըլլայ, բոլորս ալ պարտէ կը մեռնինք, բայց Երևանը չենք յանձնել»...*

Հայաստանի Հանրապետութեան առաջին կառավարութեան մէջ Արամ կը ստանձնէ ներքին գործոց և պարէնաւորման նախարարի պաշտօնը:

Դժբախտաբար, կարճ կը տևէ Արամի պետական գործունէութիւնը, ընդամենը 7-8 ամիս:

1918 Դեկտեմբերին ան կը վարակուի բժաւոր տիֆով և կը մեռնի 29 Յունուար 1919-ին:

2018-ին Հայաստանի մէջ կը տեղադրուի Արամ Մանուկեանի արձանը:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ



Սարդարապատի յուշահամալիրը կառուցուած է 1968-ին, 1918-ի հերոսներու յիշատակին:

Յուշահամալիրի մուտքին կան երկու հսկայ ցուլեր, որոնք կը խորհրդանշեն ուժը և յամատութիւնը:

Համալիրի տարրերէն Զանգակատունը ունի 35 մետր բարձրութիւն: Զանգակատան զանգերը հայրենասիրական մեղեդիներ կը հնչեցնեն:

Զանգակատունէն դէպի Յուշապատի ուղղութեան վրայ կը գտնուի ծառուղի մը, որուն աջ կողմը հինգ հպարտ Արծիւներ նստած են, որոնք պետականութեան, ուժի, հզօրութեան խորհրդանիշեր են և կը մարմնաւորեն հայ նահատակ քաջորդիներու հոգիները:

Յաղթանակի Յուշապատին երկու կողմերը քանդակներով զարդարուած են: Հոն դրոշմուած են նաև չար ուժերու դէմ պայքարող բարի ուժերը խորհրդանշող թևաւոր Ձիեր:

Ընդհանուր գիտելիքներ

- 1.- Մարդու մարմնի ղր անդամները ամբողջ կեանքի ընթացքին կ'աճին:
Քիթն ու ականջը:
- 2.- Ինչո՞ւ աստղերուն գոյները տարբեր են:
Անոնց ջերմաստիճանի տարբերության պատճառով:
- 3.- Ո՞վ յայտնաբերած է արեան շրջանառութիւնը:
Ուիլիըմ Հարվի Կուշինք:
- 4.- Քանի՞ կէտ կայ կոլֆի գնդակին վրայ:
336:
- 5.- Ինչքան ժամանակէ արևին լոյսը աշխարհ կը հասնի:
Արևին լոյսին աշխարհ հասնիլը կը տևէ 8 վայրկեան և 19 երկվայրկեան:
- 6.- Ո՞րն է աշխարհի ամէնէն երկար գետը:
Նեղոս գետը:
- 7.- Երբ սկսած են Ողիմպիական խաղերը:
Ն.Ք. 776 թուականին:

Ատողջ Միտք ատողջ մարմնի մէջ

Ատողջ միտք և ատողջ մարմնի ունենալու համար անպայման պէտք ունինք լաւ և հաւասարակշռուած սնունդի, որպէսզի մեր մարմնի բջիջները ատողջ և աշխոյժ աշխատին:

Պէտք է ընդունինք որ ատողջ մնալու համար պէտք չէ չափազանց ուտենք նաև լաւ մտածենք մեր կերակուրի ընտրութիւններուն մէջ:

Մարզանքը երկրորդ կարևոր ընկերն է մեր ատողջութեան պահպանման:

Լաւ յիշենք նաև, որ մեր մարմնին 2/3-ը կազմուած է ջուրով:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- 1- Օրական 2 լիթր ջուր խմենք
- 2- Որոշ ժամերուն ճաշենք
- 3- Ճաշի պահուն ջուր չխմենք
- 4- Ճաշէն անմիջապէս յետոյ ակոսները մաքրենք
- 5-Գիշերը կանուխ պատկինք և ատուն կանուխ արթնանք

ԱԳԱՀԸ



Ժամանակին շատ հարուստ մարդ մը կ'ապրէր: Ան շատ կալուածներ ունէր: Բայց հարուստը երբեք գոհանալ չէր գիտեր:

Ան կը փափաքէր ունեցածը բազմապատկել. մանաւանդ շատ կը սիրէր դեղին ոսկի:

Օր մըն ալ այսպիսի խօսակցութիւն մը կը հասնի անոր ականջին, որ իբր թէ տարուան մէջ գիշեր մը կայ, երբ արևելքէն ու արևմուտքէն եկող աստղերը կը համբուրուին ու նորէն կը բաժնուին, եթէ այդ ակնթարթին մարդ իր սիրտին ուզածը յայտնէ երկինքին՝ իղձը անմիջապէս կը կատարուի:

Ահա այդ գիշերը հարուստը կը բարձրանայ բլուրի մը գագաթը, ուրկէ կ'երևէր ամբողջ երկնակամարը:

«Երանի՛ այս բոլոր աստղերը

ոսկի դառնային և իմս ըլլային», - կը մտածէ ան:

Եւ ահա, յանկարծ երկնակամարը կը լուսաւորուի, աստղերը կայծակի արագութեամբ կու գան, կը հանդիպին իրարու և կարօտով կը համբուրուին:

Հարուստը անմիջապէս կը բացագանչէ.

Ո՞վ երկինք, կատարէ՛ սրտիս փափաքը. Ինչի որ դպչիմ՝ թող ոսկի դառնայ, ոսկի՛, ոսկի՛...

Կը պատմեն թէ երկինքը կը կատարէ անոր ուզածը:

Ազահը ուրախ-ուրախ կը շտապէ տուն, որպէսզի կնոջը յայտնէ իր բախտաւորութիւնը, կը գրկէ ու կը համբուրէ կինը:

Կնոջ փոխարէն իր դիմաց ոսկիէ արձան մը կը կանգնի: Այսինքն՝ կինը ոսկիէ արձան կը դառնայ:

Հարուստը կ'ուզէ վիշտին սաստկութենէն փետտել մագերը, բայց մագերն ալ անմիջապէս ոսկի կը դառնան:

Ծառաներուն կը հրամայէ որ իրեն ուտելիք բերեն, բայց անմիջապէս որ հացը ձեռքը կ'առնէ, ան ոսկի կը դառնայ:

Ոսկի կը դառնան թէ՛ ամանները, թէ՛ կերակուրները, թէ՛ սեղանը:

Հարուստը ոչինչ կրնայ ուտել, անօթութենէն կը մեռնի:

ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐՈՒՆ ՊԶՏԻԿ ՄՐՑԱՆԻՇՆԵՐԷՆ



*Ո՞րն է ամենէն մկանոյր կենդանին...
Ամենէն շարակերը...
Գիտնալու համար կարդա՛ հետևեալ մրցանիշները.*

- Կատուն.**- Ամենէն ծեր կատուն ապրած է 34 տարի:
- Մրջինը.**- Մրջինը կրնայ իր ծանրութենէն 60 անգամ ատելի բեռ շարկել:
- Որսաշունը.**- Կրնայ վազել ժամական մինչև 60 քմ.:
- Խխունջը.**- Խխունջ մը կրցած է ժամական 400 մեթր արագութեամբ յառաջանալ:
- Թիթեռնիկի թրթուրը.**- Ունի 2000 մկան: Մինչ մարդ արարածը օժտուած է միայն 700 մկաններով:
- Շենփանգէն.**- Երկրային ամենէն խելացի ստնաւորն է:
- Թութակը.**- Կանաչ թութակը շատախօս է. ան կրնայ մինչև 1000 բառ սորվիլ:
- Որդը.**- Հողի ամենէն երկար որդը 6,70 մեթր երկայնք ունէր:
- Խլուրդը.**- Կրնայ փորել 91 մեթր երկարութեամբ անցք մը մէկ գիշերուան ընթացքին:
- Աղանիսն.**- Ճամբորդող աղանիս կրնայ թռչիլ ժամական մինչև 170 քմ.:
- Կոկորդիլոսը.**- Աշխարհի ամենէն մեծ սողունն է: Անոր երկայնքը կրնայ հասնիլ մինչև 8 մեթրի:
- Մեղրահաւը.**- Միակ թռչունն է, որ կրնայ դէպի ետև թռչիլ:
- Փիղը.**- Մամա փիղը իր ձագերը իր փորին մէջ կը պահէ 22 ամիս:
- Ուղտը.**- Կրնայ 90 լիթր ջուր խմել մէկ անգամով:
- Արջակապիկը.**- Ամենէն պզտիկ կապիկի տեսակն է: Անոր հասակը կը հասնի 30 սմ.ի:
- Ճերմակ մրջինը.**- Ամենէն երկար ապրող միջատն է, կ'ապրի 60 տարի:
- Ընգղան.**- Մարդոց ծանօթ ամենէն մեծ ընգղան 16 մեթր հասակ ունէր:
- Կիտաժանին.**- Այս ծովային ստնաւորը ունի կենդանիներուն մէջ ամենէն ծանր ուղեղը, 9,2 քիլո:
- Պոա օձը.**- Կրնայ առանց ուտելու ապրիլ 1400 օր:

Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմագէտ

- 1.- Ո՞վ գրած է Հայաստանի քայլերգը:**
 - ա.- Միքայէլ Նալպանտեան
 - բ.- Արամ Մանուկեան
 - գ.- Պարոյր Սևակ
- 2.- Հայաստանի Ազգային զինանշանի չորսի բաժնուած մասերուն մէջ ինչ գետեղուած է:**
 - ա.- սուր և գրիչ
 - բ.- Հայաստանի չորս թագաւորութիւններուն զինանշանները
 - գ.- հասկ և շղթայ
- 3.- Որ թուականին կնքուած է ՄԵՐԻ դաշնագիրը:**
 - ա.- 1915
 - բ.- 1918
 - գ.- 1920
- 4.- Ո՞րն է աշխարհի ամենէն երկար գետը:**
 - ա.- Արագը
 - բ.- Եփրատը
 - գ.- Նեղոսը
- 5.- Ե՞րբ սկսած են Ռդիմպիական խաղերը:**
 - ա.- Ն.Ք. 776
 - բ.- Ք.Ե. 196
 - գ.- Ն.Ք. 300
- 6.- Արամ Մանուկեան ինչի՞ նախարար նշանակուեցաւ:**
 - ա.- Պաշտպանութեան նախարար:
 - բ.- Արտաքին գործոց նախարար:
 - գ.- Կրթական նախարար:
 - դ.- Ներքին գործոց և պարէնաւորման նախարար:
- 7.- Քանի՞ կէտ կայ կուֆի գնդակին վրայ:**
 - ա.- 363
 - բ.- 336
 - գ.- 633
- 8.- Ո՞ր թուականին կառուցուած է Սարդարապատի յուշահամալիրը:**
 - ա.- 1918
 - բ.- 1998
 - գ.- 1968
 - դ.- 2018
- 9.- Հայաստանի ազգային դրօշակի գոյներն են.**
 - ա.- կարմիր, կապոյտ, նարնջագոյն
 - բ.- կապոյտ, ճերմակ, կարմիր
 - գ.- կանաչ, ճերմակ, նարնջագոյն
 - դ.- նարնջագոյն, կապոյտ, կարմիր
- 10.- Ճի՞շդ, թէ սխալ**
Սարդարապատի Յուշահամալիրի մուտքին կան երկու հսկայ ցուլեր, որոնք կը խորհրդանշեն ուժը և յամառութիւնը:



Մանկապատանեկան Գործընդեր կը հովանաւորեն ՀՅՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Յեռաձայն (514) 332-3757
Յեռապատճէն (514) 332-4870
Email: sylva@horizonweekly.ca

Թիւր պատրաստեց՝
Սալբի Էլէճեան-Քելլեան